

82

2-16

910



u. p.
u. p.



Ն Ա Ք Ք Ի Ն Ք Ե Ր Ք Ը Ն

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀՈՉԱԿԱԻՈՐ
ԳԱՂՏՆԻ ՈՍՏԻԿԱՆԻՆ
ՆՈՐ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ՅԱՐԳՄ. Ժ. Շ.

ՅԻԻ 19

ՆԱՔ ՓԻՆՔԵՐՔԸՆԻ ՄՐՁԱԿԻՑԸ



Նէլսըն ետին դառնալով տեսաւ որ Փինքերթընը իրմէ բաժնող
միջոցը զգալապէս քիչցած էր:

ԳՈՂՈՒԹԻՒՆԸ

Այս դարուն սկիզբը, Միացեալ Նահանգներու մեծ օրաթերթերէն շատեր յաջորդաբար քանի մը շարաթ խոշոր գիրերով հրատարակեցին ծանուցումներ, որոնցմով Շիքակոյի մէջ հաստատուած գաղտնի ոստիկաններու նոր գրասենեակ մը իր հիմնարկութիւնը կը հաղորդէր հասարակութեան:

Այս հաստատութեան տնօրէնը կը կոչուէր Բալֆ Նէլսըն, և եթէ այդ ռեկլամներուն մէջ իր հաւաստումներուն կէսը միայն ճիշդ ըլլար, անցեալ, ներկայ ու ապագայ բոլոր ոստիկաններուն թագաւորն էր անշուշտ:

Այդ ծանուցումներուն համեմատ, Մր. Բալֆ Նէլսըն մինչև այն ատեն ծառայած էր Քանատայի մեծ քաղաքներէն մէկուն պաշտօնական ոստիկանութեան մէջ և այդ հանգամանքով ձեռք բերած էր ա՛յնպիսի փայլուն յաջողութիւններ որ մարդուս երեւակայութիւնը կը շփոթէր կը մնար:

Շրջապատուած էր, — միշտ այդ ծանուցումներուն քսածին համեմատ—, բաղձաթիւ նշանաւոր աշխատակիցներէ, որոնք եթէ իրենց պետին չէին հաւասարեր, բայց կը գերազանցէին միւս բոլոր գործակալութեանց գաղտնի ոստիկանները:

Անոնցմէ իւրաքանչիւրը ոճիրներու որոշ տեսակի մը մէջ մասնագիտութիւն ձեռք բերած էր: Այսպէս Բալֆ Նէլսըն իր հրամանին տակ ունէր գաղտնի ոստիկաններ, որոնք մի միայն սպաննութեան գործերով կ'զբաղէին, ուրիշներ՝ խորտակումով և այլք առանց խորտակումի կատարուած գողութեան գործերով ևն. ևն.: Գալով Նէլսընի, անիկա իրեն կը վերապահէր մասնաւորապէս փափուկ և կնճռոտ գործերը և երբ գործ մը ձեռք առնէր, յաջողութիւնը ապահովուած էր կանխաւ:

Ծանուցումներու այս ձեւը հազուադէպ չէ Ամերիկայի մէջ: Եանքինները թշնամի չեն ազմկայից ռեկլամ ի մը և իրազեկները դիտեն թէ ի՞նչ կ'արժէ ան: Հակառակ ամէնուն, Բալֆ Նէլսընի կողմէ իր անձին տրուած գովեստները աստիճան մը տպաւորութիւն գործեցին հասարակութեան վրայ և շատ չանցած, Շիքախոյի մէջ իր հիմնած գաղտնի ոտտիկանութեան գրասենեակը անուանի եղաւ բոլոր Մ. Նահանգներուն մէջ:

Հասաուր Ուիլերմ Բանտոյֆ երկար տարիներէ ի վեր կը բնակէր Քոնէքթիքուդ նահանգին Հարթֆորտ փոքր քաղաքին արուարձանին մէջ գտնուած սիրուն վիլլա մը: 70 տարեկան ազւոր ծերունի մըն էր, որ ընդհանուր յարգանք և համակրութիւն կը վայելէր:

Երկար ատենէ ի վեր այրի էր: Երկու մանչ զաւակ ունէր, որոնք ամուսնացած էին և Նիւ Եօրքի մէջ կը վարէին բարդաւաճ գործարան մը: Ետ անգամներ ստիպած էին իրենց հայրը որ վիլլան ծախէ և Նիւ Եօրք գայ ու հաստատուի իրենց քով: Բայց անկիւ միշտ մերժած էր բաժնուիլ իր հողի անկիւնէն, որուն կապուած էր ա՛յնքան սիրելի յիշատակներով, — վասն զի մանկութենէն ի վեր Հարթֆորտ կը բնակէր:

Սակայն օր մը, իր տունը գողեր ժտած և քսան հազար տոլարի չափ գումար մը և բազմաթիւ արժէքաւոր առարկաներ գողցած ըլլալով, զաւակները գրէթէ համոզած էին զայն որ Նիւ Եօրք գայ հաստատուի:

Բայց վերջին պահուն, ծերունին դարձեալ ընկրկած էր իր կեանքին ու սովորութիւններուն մէջ ընելիք այդչափ արմատական փոփոխութեան մը առջև: Ասկէ զատ, մեծ քաղաքին ազմուկը, տենդոտ գործունէութիւնը վախ կը պատճառէին իրեն:

Ուստի Ուիլերմ Բանտոյֆ մնաց Հարթֆորտի իր վիլլային մէջ. Սակայն հարկ դատեց կարգ մը զգուշութիւններ ձեռք առնել գողերու հաւանակսն վերադարձին դէմ և գնեց խոշոր շուն մը, որ գիշեր ցորեկ պահպանութիւն կ'ընէր տունին շուրջը:

Բանտոյֆ, իր տարիքին հակառակ, հուժկու և գործունեայ էր տակաւին: Երբէք ախուր դէմք մը ցոյց չէր տար: Կը սիրէր ընկերակցութիւնը և զրօսական պտոյտներ կ'ընէր վաղեմի բարեկամներու ընկերակցութեամբ:

Բովանդակ աշխարհի մէջ անցած դարձածով կը հետաքրքրուէր: Կը գնէր բազմաթիւ թերթեր և հանդէսներ, որոնց ընթերցումով կ'անցընէր ընդհանրապէս առուան ժամերը:

Մէկ խօսքով, կենցաղատէր մը և իմաստուն մըն էր:

Օր մը, երբ իր սենեկազգեստին մէջ պլլուած և կակուզ թիկնաթուի մը վրայ բազմած կը կարգար իր սիրական թերթերը, միեւնոյն ատեն ծխելով իր սիկարը և ուժայ ուժայ կուլ աւալով իւր մօտ, պզտիկ սեղանի մը վրայ դրուած գաւաթ մը սքանչելի Պօռտօն, լսեց որ փողոցին դուռը կը դարնէին: Եունը, որ ցերեկները կը կապուէր, սկսաւ հաչել դիւահարի մը պէս:

Վայրկեան մը ետք Մաքէնա՝ իր ծերունի հուստարիմ ծառան սենեակէն ներս մտաւ և այցաքարտ մը յանձնեց իրեն:

— Այս պարոնը կ'ուզէ անմիջապէս խօսիլ ձեզ հետ, ըսաւ:

Վիճատիպ քարդը կը կրէր անունը Բալֆ Նէլսընի, գաղանի ոտտիկան, Շիքախօ, Պրիճ էվընիւ, 177:

— Ո՛հ, ո՛հ, ըսաւ ծերունին: Բայց ասիկա այն գաղանի ոտտիկանն է, որուն մասին թերթերը ա՛յնքան ռեկլամ ըրին վերջին տասններս: Եթէ ըսուածները ճիշդ են, կ'երեւի թէ տակաւին իր նմանը գտնուած չէ: Անմիջապէս ներս բերէք այդ պարոնը: Կ'ուզեմ շուտով ծանօթանալ անոր հետ:

Ծերունի սպասաւորը անհետացաւ և վայրկեան մը ետք նորէն եկաւ ընկերակցութեամբ այցելուին, որ իր այցաքարտը զրկած էր: Նէլսըն բարձրահասակ և նիհար էր: Գլուին մինչև ոտքը հազուած էր անթերի վայելչութիւնով մը: Ամբողջովին սափրուած դէմքը կը նմանէր կատակերգակի մը դէմքին: Սուր և խորաթափանց ակնարկը կարծես թէ մարդուն մինչև հոգիին խորը կարգալ կ'ուզէր:

Մէկ խօսքով, առաջին տպաւորութիւնը հեռի էր անշրպաստ ըլլալէ իրեն: Զինքը տեսնելը բաւական էր չկասկածելու համար թէ շատ ուշիմ և շատ պաղարիւն մարդ մըն էր:

Քաղաքավարութեամբ խոնարհեցաւ տանտիրոջ առջև:

— Մը. Բանտոյֆի՞ հետ է որ պատիւ ունիմ խօսելու, հարցուց:

— Նո՛յն ինքը , պատասխանեց ծերունին , ոտքի ելլելու ձև ընելով :

— Օ՛հ , Մր . Բանտօլֆ , ըսաւ գաղտնի ոտիկանը , նրօտեցէք , կ'աղաչեմ : Հուսա , ձեր դէմը պիտի նստիմ եւ սնմիջապէս պիտի ըսեմ թէ ի՛նչ պատճառաւ որոշեցի գալ եւ գրտնել ձեզ :

Բանտօլֆ , գաղտնի ոտիկանին , քաղաքավար եւ յարգալիր ձեւերէն նպատաւոր կերպով տպաւորուած , թեթեւ ողջոյն մը սուաւ եւ նստաւ :

— Պիտի չձածկեմ ձեզմէ , ըսաւ , թէ բաւական հեռաքրքրուած եմ : Արդէն ծանօթ է ինձի ձեր անունը , զոր կարգացած եմ թերթերու ծանուցումներուն մէջ : Կուք սպել տուած էք զանոնք , այնպէս չէ՞ :

— Տէր Աստուած , այ՛՛ , խոստովանեցաւ Նէլսըն անկեղծօրէն : Բայց կ'աղաչեմ , ասոր համար շատ գէշ կարծիք մը մի՛ կազմէք իմ վրաս եւ մի՛ նկատէք զիս տեսակ մը շատախօս , աղմուկի եւ ռեկլամ ի սիրահար : Ի՛նչ ընենք : Աշխարհը այնպէս եղած է հիմակ որ պէտք է տեսակ մը բունի ոյժով յաճախորդ ճարել : Երբ կը տեսնուի որ Նիւ Եօրքցի Նաթ Բինքերթընը իր արժանիքէն հազար անգամ աւելի մեծ համբաւ մը կը վայելէ , պէտք է խոստովանիլ թէ խիստ դժուար կ'ըլլայ ապրուստ մը շահիլը :

— Ի՛նչ , պողոսց ծերունին , կը կարծէք թէ Նաթ Բինքերթըն տխմարին մէկն է : Ատիկա դարձանք կը պատճառէ ինձէ : Ես միշտ անոր գովեստը լսած եմ եւ ես իսկ ...

Բայֆ Նելսըն ժպտեցաւ :

— Օ՛հ , չեմ դարձնար : Պէտք է գիտնալ : Բայց կրնամ հաւատառել ձեզի թէ այն հասարանաւոր յաջողութիւնը , որոնք այնքան կը փառաբանուին թերթերու կողմէ , ծայրէ ծայր յերիւրուած են : Տեսակ մը ռեկլամ է ատիկա , զոր ես , իմ մտիս , երբէք պիտի չզիջանիմ ընել : Ես հարիւր անգամ աւելի աղէկ կը սեպեմ ինքզինքս հասարակութեան ճանչցնել անկեղծօրէն , ինչպէս ըրած եմ : Օ՛հ , գիտե՛մ թէ մարդիկ կան , որ ճշմարիտ պաշտուած մը ունին այդ Բինքերթընին հանդէպ : Զարմանալի՞ է եթէ անիկա ա՛յդքան խնկարկուներով այսօր համբաւաւոր եղած է ամէն տեղ :

«Է՛ր ուրեմն , ես յանձնառու կ'ըլլամ ապացուցանելու իրեն թէ տակաւին ոտիկաններ կան , որ իրմէ շա՛տ գերա-

զանց են : Բայց դառնանք մեր գործին :

— Լա՛ւ , Մր . Նէլսըն : Կը փափաքիմ գիտնալ թէ ի՛նչ եանի կը պարտիմ ձեր այցելութեան պատիւը :

— Պիտի հաղորդեմ ձեզի , Մր . Բանտօլֆ : Քիչ ատեն առաջ յանդուսգն գողութեան մը զո՛հ եղաք , այնպէս չէ՞ :

— Ընչդ է : Վեց ամիս առաջ է :

— Եւ այս առթիւ բաւական վնասներու ենթարկուեցաք , այնպէս չէ՞ :

— Այո՛ , քսան հազար տոլարի չափ հնչուն դրամ եւ արժեթուղթ կորսնցուցի , առանց հաշուելու տասը հազար տոլարի չափ գո՛հարեղէնները եւ գեղարուեստական առարկաները :

— Ոտիկանութիւնը իր բոլոր ջանքերուն հակառակ չկըրցաւ ձեռք անցընել յանձաւորները , այնպէս որ այժմ ամենափոքր այս մը չունիք թէ ձեր դրամները պիտի վերստանաք , այնպէս չէ՞ :

— Աւա՛ղ այդպէս է , ըսաւ Բանտօլֆ խորին հառաչանքով մը : Ոտիկանութիւնը կրցածը ըրաւ եւ զինքը մեղադրելիք բան մը չունիմ : Իմ գողերս անկէ աւելի վարպետ էին եւ անշուշտ հիմա ինքզինքնին ապահով վիճակի մէջ դրած են իրենց աւարով միասին : Ես այքս հանած եմ այդ գողուածները : Աւելի աղէկ՝ անոնց եւ աւելի դէ՛շ ինձի համար :

— Է՛ր ուրեմն , եկած եմ ծանուցանելու ձեզի թէ շատ հաւանաբար պիտի վերստանաք ձեր դրամին մէկ մասը , առանց հաշուելու այն գո՛հունակութիւնը , զոր պիտի ունենաք թերեւս , ի մտոյ տեսնելով բանտարկուիլը այն անձերուն , որոնք ձեր տունը մտան առանց ձեր արտօնութեան :

— Իրաւ որ , ըսաւ Բանտօլֆ , եթէ այդպէս ըլլայ , չեմ ծածկեր ձեզմէ թէ բուն գո՛հունակութիւն մը պիտի զգամ : Հաճելի չէ իւրովի ըսել թէ չարագործները կը նստին հանգիստ կերպով կ'ուտեն ձեր դրամը եւ աւելի ըլլալով ձեր քիթին ալ կը խնդան :

— Մր . Բանտօլֆ , ըսաւ գաղտնի ոտիկանը հանգարտօրէն , այդ գործը ինձի յանձնեցէք եւ ես կ'երաշխաւորեմ որ քիչ ատենէն ձեռք պիտի անցընեմ անոնց օճիքը :

Ծերունին նայեցաւ այցելուին երեսը , առանց իր դարմանքը ծածկել ջանալու :

— Ներողութիւն, ըսաւ վերջապէս, բայց գողութիւնը վեց ամիս առաջ տեղի ունեցած է: Գողերը շատոնց կծիկը դրած են: Եւ այդչափ ժամանակ անցնելէ ետք կը յուսա՞ք գաննել զանոնք:

Նէլսըն ժպտեցաւ:

— Կարծեմ թէ այո՛, սկսաւ պարզապէս: Ինծի մտիկ ըրէք, Մր. Բանտօլֆ, շարունակեց ծերունիին կողմը ծռելով և ձայնը մեղմացնելով, պիտի բացատրեմ ձեզի անցած դարձածը: Կը խորհիք անշուշտ որ, եթէ ինծի մնար, երբէք մտքէ պիտի չանցնէի հոս դալ և զբաղիլ վեց ամիս առաջ տեղի ունեցած գողութիւնով մը, որուն հեղինակները դրանուամ չեն երբեք: Շատ լաւ գիտեմ թէ անկարելի գործի մը ձեռնարկած պիտի ըլլայի և անխուսափելի ձախողութեան մը պիտի ենթարկուի: Բայց ուրիշ բան մը պատահեցաւ: Հիշա պիտի ըսեմ:— Արհեստիս բերմամբ յաճախ կ'այցելեմ եմ թաղաքներու ամէնէն վատահամբաւ անկիւնները: Այսպէս, քանի մը օր առաջ, երբ նշանաւոր խարեբայ մը կը փնտռէի Պոսթընի մէջ, առիթ ունեցայ այդ կարգի շէնք մը մտնելու:

Ճիպրուածը ուղեց որ լսեմ այն խօսակցութիւնը, զոր իմինիս մօտ գտնուած սեղանին առջև իրարու հետ կը փոխանակէին չարագուշակ դէմք ունեցող երկու անհամներ: Ականջ դրի և լսած խօսքերէ որոշ կերպով յայտնի եղաւ թէ այդ երկու մարդիկը Հարթվորտի մէջ գողութիւն մը ըրած էին վեց ամիս առաջ:

« Սպասեցէք, ամէնքը աս չէ: Այս յիշատակը թարմացնելէ ետք, աւելցուցին թէ իրենց զոհին, — որ ծերունի մըն էր, ինչպէս, կ'ըսէին —, կասկածը փարատած ըլլալու էր հիմա և թէ ժամանակ էր երկրորդ այցելութիւն մը տալու անոր:

Այս անակնկալ լուրին վրայ, Ուիլքըմ Բանտօլֆ ոստում մը ըրաւ:

— Մհ, թշուառականները ըսաւ: Է՛ր ուրեմն, թո՛ղ գան: Ես հիմա իմ քովս ունիմ շուն մը, որ լաւագոյն կերպով պիտի ընդունի զիրենք:

— Է՛հ, Մր. Բանտօլֆ, մի՛ կարծէք թէ անոնք շունի արգելքը բանի տեղ զնոզ ստանակներ ըլլան: Անոնց խճորէն եզոզ չարագործներ հազար մը ջոցներ ունին հեղութիւն պատ-

ճառող կենդանիէ մը ազատել ինքզինքնին:

— Իրաւունք ունիք: Բայց ի՞նչ ընելու է ուրեմն: Ինծի իմացնելու եկած էք և կը խնդրէք որ գործը դուք ստանձէք: Աւելորդ է ըսել: Մր. Նէլսըն, թէ ամենայն սիրով կ'ընդունիմ ձեր առաջարկը: Ասկէ գատ, քանի մը ոստիկաններ բերել պիտի տամ, որպէսզի գիշեր ցերեկ հսկողութիւն ընեն այս տեղ:

— Չըլլա՛յ որ այդպիսի բան մը ընէք, Մր. Ռանտօլֆ: Այդ չարագործները կը նշմարեն, հիմակուհիմակ ետ կը կենան և իրենց ձեռնարկը ետ կը ձգեն: Բացարձակապէս պէտք է առիթէն օգտուիք և ձեր օձեքը ազատէք անոնց ձեռքէն: Հետեւաբար, եթէ թոյլ կ'ուտաք, ես հոս պիտի հաստատուիմ և ամէն գիշեր հսկողութիւն պիտի ընեմ: Միայն թող գան և կ'երաշխաւորեմ ձեզի որ ձեռքէս պիտի չ'ազատին:

Ծերունի Բանտօլֆ դիտողութիւն մը չըրաւ: Իր ծառան կանչեց և անոր հրամայեց որ վիլլային առաջին յարկը գանձուած և բարեկամներու յատկացուած սենեակը պատրաստէ իր հիւրին համար:

Մաքէնս յետոյ գնաց գաղտնի ոստիկանին պայուսակը բերելու այն պանդոկէն, ուր անիկա իջած էր, ծերունի հարուստին այցելելէ առաջ:

Նէլսըն գետեղուեցաւ իրեն յատկացեալ սենեակին մէջ և իրիկունը իր հիւրընկալին ճաշին մասնակցեցաւ: Նոյն իսկ խնդրեց ներկայացնել շունն Պէրրիի որ ճաշարահ բերուեցաւ:

Ընդունելութիւնը, զոր ըրաւ այդ անձանօթը, սիրալիր չէր: Նախ ահառները ցոյց տուաւ սպառնալից: Բայց տեսնելով որ իր տէրը մտերմաբար կը խօսէր այդ օտարականին հետ, Պէրրի վերջ ի վերջոյ լաւագոյն զգացումներու վերադարձաւ:

Գիշերը առանց դէպքի անցաւ: Ժամը 11 ին միջոցները պառկելու գացած էին և շունը դարձուած էր պարտէզ, ուր գիշերը կը թողէին զայն որ ազատօրէն թափառի:

Ծերունի Ռանտօլֆ շատ անհանդարտ ըուն մը ունեցաւ, վայրկեանէ վայրկեան սպասելով գողերուն և ոստիկանին միջև սկսելիք կռուին: Բայց իր վախերը չերկարացան: Պէրրի անգամ մը իսկ չհաչեց և առտուն, երբ Մաքէնս բացաւ վիլլային դուռը, քաջ շունը իր մօտ վազեց, պոչը ուրախօրէն երերցնելով:

Ծերունի սպասաւորը, իր տիրոջ հազուելուն օգնելով մէկտեղ, անկեղծօրէն խոստովանեցաւ անոր թէ ինք ալ շատ աղէկ քնացած էր:

Միջոց մը, աւելցուց, — ժամը առտուան լը ըլլալու էր ու, ինծի այնպէս եկաւ որ գեանայարկին նրբանցքին մէջ ստքի մեղմ ձայն մը լսեցի: Ելայ, կամացուկ մը մինչև սանդուխին գլուխը դացի և ականջ դրի: Բայց այլևս բան մը չլսեցի: Ինքրինս ըսի որ զրգուռած երեւակայութեանս մէկ խաղն էր ասիկա:

Բացայայտ է, ըսաւ տէրը: Եթէ ազմո՛ւկ ըլլար, անշուշտ ես ալ պիտի լսէի: Կը հարցնէք Մր. Նէլսընի թէ ինք բան մը նշմարե՞ց:

Ի՞նչ նշմարէի, հարցուց նոյն պահուն գաղտնի ոստիկանը որ Ռանտօլֆի սենեակը կը մանէր:

Տանտէրը Մաքէնսի պատմութիւնը կրկնեց անոր և Նէլսըն սկսաւ խնդալ:

— Անկարելի է, ըսաւ: Գիտցէք թէ ես չեմ պառկած, նոյն իսկ զգեստներս չեմ հանած և ամբողջ գիշերը արթուն մնացած եմ: Հաւատացէք որ աչքս ու ականջս սուր են: Եթէ այս տան մէջ անսովոր բան մը պատահած ըլլար, անմիջապէս պիտի նշմարէի: Եւ յետոյ մինակ ես չէի այս տունը պա՛պանողը, Մր. Ռանտօլֆ: Եթէ ձեր շունը, այդ քաջ Պէրրին, կասկածելի բան մը տեսած կամ լսած ըլլար, ազէկ դիտէք թէ պիտի հաչէր:

Այս խօսքերուն վրայ ծերուկը բոլորովին ապահովուեցաւ և Մաքէնս ինք ալ վստահ եղաւ թէ պատրանքի մը խաղալիքը եղած էր:

Գաղտնի ոստիկանը դո՛ւ էր Ռեյլըմ Ռանտօլֆի ասպնջականութենէն: Իշխանի մը պէս կը վարուէին իրեն հետ և չկար խնամք մը, մեծարանք մը, զոր իր հիւրընկալը ցոյց չտար իրեն:

Յորը իրիկուն եղաւ առանց դէպքի: Ժամը 7, 30 սեղան նստան ճաշելու համար, երբ դռան զանգակը հնչեց: Շունը հաչեց: Վարչկեան մը ետք Մաքէնս ճաշարան մտաւ, ձեռքը հեռագիր մը բռնած:

- Մր. Նէլսընին համար է, ըսաւ:
- Գաղտնի ոստիկանը խօսոյն ոտքի ելաւ:
- Ապահովապէս Շիքակոյի մարդոցմէս է, ըսաւ:
- Հեռագիրը առաւ, անմիջապէս բացաւ, կարդաց և գրպանը դրաւ: Տարապայման կերպով յուզուած կ'երեւէր:
- Շատ կը ցաւիմ, Մր. Ռանտօլֆ բայց ստիպուած եմ

բաժնուիլ ձեզմէ, ըսաւ վերջապէս ծերունին: Կարեւոր գործի մը՝ երկու մարդասպաններու ձերբակալութեան վրայ է խնդիրը և պէտք է որ, ի՛նչ ըլլայ չըլլալ, անմիջապէս Պոսթըն երթամ: Շատ հաւանական է որ վաղը իրիկուն հոս ըլլամ:

Աւելորդ է ըսել թէ այս լուրը խորհին զժգոճութիւն պատճառեց Մր. Ռանտօլֆի: Բայց ի՞նչ կրնար բնել:

Գաղտնի ոստիկանը կորսնցնելիք վայրկեան մը իսկ շունէր: Ժամանակացոյցը նայելով տեսած էր արդէն թէ կառախուճըրը, ուր կ'ուզէր նստիլ, կէս ժամէն պիտի մեկնէր:

Մր. Ռանտօլֆ, ըսաւ, մեր սպասած գողերը անշուշտ այս գիշեր պիտի չգան հոս: Սովորութիւն չունին գործի ձեռնարկելու, առանց նախնապէս մանրամասն տեղեկութիւններ առնելու: Եւ յետոյ, ձեր հաւատարիմ Պէրրին հոս չէ՛: Յո՛ւ, ի տեսութիւն քիչ ատենէն:

Այս խօսքերուն վրայ, ճաշարանէն մեկնեցաւ և իր սենեակը գնաց: Հինգ վայրկեան ետքը վար կ'իջնէր, պայուսակը ձեռքը, մեկնելու պատրաստ: Վերջին անգամ մըն ալ սեղմեց Ռանտօլֆի ձեռքը, խոստանալով մօտ ատենէն դառնալ, զլիսի խոնարհումով մը ողջունեց Մաքէնսը և անհետացաւ:

Յէրը և ծառան, առանձին մնալով, իրարու երես կը նայէին, առանց համարձակելու խօսիլ: Գիշերը այդ տան մէջ բոլորովին մինակ անցընելու գաղափարը կը սարսափեցնէր զիրենք, բայց ո՛չ ոք կ'ուզէր այդ սարսափը ցոյց տալ միւսին: Վերջապէս Մաքէնս շունը ազատ թողուց պարտեզին մէջ, բոլոր դուռներն ու պատուհանները դոցեց և զընաց պառկեցաւ:

Ծերունի Ռանտօլֆ ալ իր սենեակը քաշուեցաւ: Շատ անհանգիստ էր: Անկողնին քով, սեղանին վրայ դրաւ լեցուն ատրճանակ մը: Ինքզինքը ապահովելու համար, ըսաւ ինքնիրեն թէ շունը պարտեզն էր և թէ պիտի չթողուր մէկու մը մօտենալը, առանց տունը իրար անցընելու: Բայց ի՛նչ որ ալ կ'ընէր, չէր կրնար ինքզինքը ազատել վհատեցնող անձկութենէ մը:

Եւ որովհետեւ նախորդ գիշերը հանդարտ չէր քնացած և, ասկէ զատ, ցորեկը չէր կրցած սովորական հանգիստ բնել, իր հիւրին ներկայութեան պատճառաւ, յոգնութիւնը վերջապէս յաղթեց մտահոգութեան: Աչքերը դոցեց և քնացաւ:

Բայց այս քունը երկար չտեսցայ : Յանկարծ ընդոստ ար-
թնցաւ և սարսափէն սառեցաւ մնաց : Սանդուղին վրայ
լսեց խեղդուկ ճիչ մը , որուն յաջորդեց իսկոյն աստիճան-
ներէն ծանրապէս վար գլտորոզ մարմինի մը ազժուկը :

Բանտօլփ , որ սաստիկ կը դողար , խարխափելով փըն-
տեց ատրճանակը և անկողնին վրայ նստաւ : Նոյն պահուն
իր ննջասենեակին դուռը բացուեցաւ ուժգնօրէն :

Առանց վարանելու , դէնքը այդ կողմը ուղղեց և կրակ
ըրաւ , առանց նոյն իսկ նշան առնելու , որովհետև ա՛յնչափ
մութ էր որ չէր կրնար բան մը որոշել :

Հարուածը պայթեցաւ , բայց Բանտօլփ , առանց ժամա-
նակ ունենալու որ երկրորդ անգամ կրակ ընէ , գլխին ստա-
ցաւ ա՛յնպիսի զարհուրելի հարուած մը որ դէնքը ձեռքէն
ինկաւ և ինք ալ իր անկողնին մէջ գլտորեցաւ արիւնաթա-
թաւ և զգայազրկ :

Յետոյ մթութիւնը վայրկեան մը խզուեցաւ լոյսի նուրբ
գիծով մը , մարդկային մարմին մը երթեւեկեց սենեակին մէջ
և յետոյ , խորհրդաւոր գործ մը տեսնելէ ետք անհետացաւ
անշուղի :

ՆԱԹ ԲԻՆԲԷՐԹԸՆԻ ՍՕՏ

Յաջորդ օրը , արշալոյսը կ'սկսէր բացուիլ , բայց Մր-
Բանտօլփի բնակարանին մէջ ամէն բան անշարժ կ'երեւէր
տակաւին : Սանդուղին աստիճաններուն վրայ փռուած մարդ
մը վերջապէս սկսաւ տկարօրէն շարժիլ , երկար և ջաւազին
հեծեծանք մը արձակելով : Մաքէնն էր , ձերունի սպասաւորը :
Պառկած էր սանդուղին դուռը և մարմնոյն վարի մասը կը
հանդէր աստիճաններուն վրայ : Աչքերը բացաւ , ապուշ
դէմքով մը չորս դին նայեցաւ , յետոյ նստաւ և ձեռքը մե-
քինաբար տարաւ գլխին , որ սոսկալի կերպով կը ցաւէր :
Իրեն անանկ կու գար թէ չորս կողմը ջախջախուած էր հար-
ուածներու տակ : Թանձրացած արիւն կար ճակատին և այտե-
րուն վրայ : Ձեռքը մազերուն վրայ պտտցնելով , երեւան
հանեց խոշոր վէրք մը , որ ճիշդ ճակատին վերև կը գտնուէր :
Ինչ պատահած էր ուրեմն իրեն :

Այս հարցումները կրկնելով , վերջապէս յիշեց :
Առջի իրիկունը , գաղտնի ոտականին մեկնելէն ետք ,
Մաքէնս յիշեց թէ իր սենեակը ելած էր , անցած դարձածին
վրայ ապահովութիւն չգալով :

Հակառակ Նէլսընի չահախնդրական խոսքերուն թէ վախ-
ցուած դէպքը այդ գիշեր տեղի պիտի չունենար , ինք խիստ
մտահոգ էր : Ուստի որոշեց գիշերը ոտքի վրայ անցընել :

Փոխանակ զգեստները հանելու և անկողնին մէջ պառ-
կելու , գնաց նստաւ ուրեմն իր սենեակին դրան ետև , զոր
վրայ բերած էր , փոխանակ գոցելու , ինչպէս սովոր էր :
Այդպէս ընելուն պատճառը ան էր որ կարենար իսկոյն լսել
կասկածելի ամենափոքր ազժուկ մը :

Դժբախտաբար շուտ յոգնած էր և մեծ դժուարութիւն
կը քաշէր քունին դէմ պայքարելու համար : Ամէն վայրկեան
ոտքի կ'ելլէր և կը ձգտուէր , որպէս զի քունը չտանի :

Վերջապէս , կէս գիշերէն ետք , յոգնութիւնը , իր կամ-
քէն աւելի զօրաւոր ըլլալով , յաղթեց իրեն և գլուխը ծան-
րօրէն ինկաւ կուրծքին վրայ : Յանկարծ ընդոստ արթնցաւ :

Այս անգամ սխալած չէր : Բան մը լսած էր : Նախ կար-
ծես թէ պարտէզին մէջ կը քալէին : Յետոյ մուտքի դրան
փականքը խառնած էին :

Մնկէ ետք , քայլեր հնչեցին բակին քարայտակին վրայ :
Հաւատարիմ ծառան այլ եւս չկեցաւ : Անկողնին վերև
կախուած հին սուր մը տեսնելով տաւ և սանդուղէն իջաւ
անշուղի :

Տունը մութի մէջ թաղուած էր : Մաքէնս զգուշու-
թեամբ կը յառաջանար : Այս կերպով հասաւ առաջին յարկը :
Բայց այն պահուն երբ ոտքը կը գնէր դեանայարկ տանող
սանդուղին առաջին աստիճանին վրայ , յանկարծ մարդ-
կային մարմին մը ցցուեցաւ իրեն առջև : Նոյն վայրկեանին
անլուր սաստիկութեամբ հարուած մը ստացաւ գլխին : Ինկաւ ,
խեղդուկ ազազակ մը արձակելով և գիտակցութիւնը կորսն-
ցուց :

Իր աէրը այս անկումին ձայնէն արթնցած էր :
Այս ամենքը արագօրէն անցան ձերունի սպասաւորին
մտքէն : Հիմա գիտէր թէ ի՛նչ անցած դարձած էր : Անոնք
եկած էին : Եւ յետոյ , եթէ կասկածէր իսկ , բուռական էր
ակնարկ մը ձգել բակին վրայ , որ առտուան առաջին նշոյլ-

ներէն լուսաւորուած էր արդէն : Արդարեւ բոլոր դուռները բաց էին :

Դժուարութեամբ ելաւ : Ամէն բանէ առաջ կ'ուզէր գիտնալ թէ ինչ եղած էր տէրը : Սանդուղէն ելաւ , իւրաքանչիւր աստիճանին վրայ սայթաքելով և հասաւ մինչև առաջին յարկը : Հոն ալ բոլոր դուռները բաց մնացած էին :

Մը . Բանասօլֆի ննջասննեակը սոսկալի տեսարան մը կը պարզէր : Ամէն բան տակն ու վրայ եղած էր հոն : Գարանները և զրասեղանները խորատկուած էին : Գալով Ուիլիերմ Բանասօլֆի , անիկա փոռուած էր իր անկողնին վրայ և կեանքի նշան չէր տար այլ եւս . Գլխին վրայ ունէր սոսկալի վէրք մը , ուրկէ արիւն կը հոսէր :

Բարի Մաքէնս անմիջապէս կորսնցուց այն քիչ մը պաղարիւնութիւնը , որ մնացած էր իր վրայ : Չորս առ չորս իջաւ սանդուղէն օգնութիւն կանչելով և պարտէզ խոյացաւ : Անասարանքով անցաւ անկէ և ճամբան ժամանակ ունեցաւ երազի մը մէջ եղածի պէս տեսնել շունին գիակը , որ վանդակորձին մօտ փռուած էր : Խեղճ Պէրրի թունաւորուած էր :

Իէպի քաղաք վազեց , անցորդները կեցուց և բուռն շարժումներով անոնց բացատրեց առամը որուն թատրը եղած էր տունը :

Լուրը վայրկեանաբար տարածուեցաւ պզտիկ քաղաքին մէջ : Ոստիկանութիւնը տեղեկանալով , անմիջապէս գործի սկսաւ , մինչ քանի մը բժիշկներ տուն կը վազէին : Արդարութեան պաշտօնեաներուն առաջին քննութիւններէն յայտնի եղաւ թէ Ուիլիերմ Բանասօլֆէն զոզցած էին մօտ երեսուն հազար տօլարի գուժար մը :

Գալով տարաբախտ ծերունիին , անիկա այնքան ծանր կերպով վիրաւորուած էր որ հարկ եղաւ փութով փոխադրել զայն հիւանդանոց , ուր բժիշկները զբէթէ յուսահատական նկատեցին անոր վիճակը :

Մաքէնս աժան ազատած էր : Սանդուղին վրայ իր անկուռ շատ ծանր հետեւանքներ ունեցած չէր : Շատ ալ կորսնցուցած էր — , բայց երբ վերքը կապեցին , իսկոյն ինքզինքը հանդիստ զգաց :

Ատոր փոխարէն , սոսկալի կերպով զայրացած էր : Մասնաւորապէս գաղանի ոստիկան Նէլսընին դէմ լեցուած էր :

Այդ մարդը ինչո՞ւ մեկնած էր ճիշդ առջի օրուան իրիկունը , պատուակելով թէ ուրիշ ստիպողական գործ մը ունէր :

Միթէ պարտաւոր չէր իր պաշտօնին գլուխը մնալ այն վայրկեանէն ուր եկած էր իր ծառայութիւնը տրամադրելու , երբ ո՛չ որ այդպիսի բան մը խնդրած էր իրմէ :

Բարի ծառան յանկարծ գաղափար մը ունեցաւ : Այլ եւս չէր ուզեր այդ Նէլսընին խօսքը լսել և անշուշտ իր տէրը , եթէ կարենար իր կարծիքը յայտնել , համամիտ պիտի ըլլար իրեն , վասնզի ստուգիւ անընդունելի էր որ գաղանի ոստիկան մը այդքան թեթեւօրէն լքանէր յաճախորդը . որ իրեն վստահացած էր :

Բայց նիւ Եօրքի մէջ չկա՞ր ուրիշ գաղանի ոստիկան մը , առնուազն նոյնչափ ճնուանի , որուն քաջագործութիւններուն տեղեակ էր ամբողջ Ամերիկա և որ ռեկլամի համար չունէր Նէլսընի տարապայսման ճաշակը :

Առանց իր դիտումներուն մասին մէկուն բան մը ըսելու , ծերունի սպասաւորը կայարան գնաց , նիւ Եօրքի համար տոմսակ մը առաւ և քանի մը վայրկեան ետք կ'երթար դէպի Մ . Նահանգներու գլխաւոր քաղաքը , ուր մտադիր էր այցելել նշանաւոր գաղանի ոստիկան Նաք Բինքերթընի :

Տակաւին շատ տկար կ'զգար ինքզինքը : Կորսնցուցած արիւնը և անցուցած յուզումները իր ոյժին մեծ մասը սպառած էին : Այսու հանդերձ , այնչափ զբաւուած էր որ չկրցաւ աչքը գոցել , կ'ուզէր ժամ առաջ գտնուել Բինքերթընի մօտ և անցած դարձածը պատմել անոր :

Երբ նիւ Եօրք հասաւ , զբէթէ կէս օր էր : Օթոմօսլիլ մը նստաւ , աւելի շուտ երթալու համար : Քանի մը վայրկեան ետք օթոմօսլիլը կանգ առաւ այն շէնքին առջև , ուր կը դանուէին գաղանի ոստիկանին գրասենեակները : Մաքէնս արագօրէն ելաւ սանդուղէն և իր անունը ծանուցանել տուաւ :

Այլայլած դէմքը և վիրակապերով շրջապատուած գլուխը տեսնողին համար դիւրին էր գուշակել թէ ծանր և ստիպողական գործի մը համար եկած էր հոն : Ուստի անմիջապէս տարուեցաւ վարպետին սենեակը :

Բինքերթըն , իր այցելուին ուժասպառ վիճակը տեսնելով , բառ մը իսկ չըսաւ անոր նստելէն և գաւաթ մը գինի խմելէն առաջ , ինչ որ ծերունի սպասաւորին վերադարձուց իր

բոլոր ոյժը :

Այն ատեն Մաքէնս կրցաւ սկսիլ իր պատմութեան : Նախ խօսուեցաւ այն գողութեան վրայ, որուն զո՞ն եղած իր տէրը՝ Հարթֆորտի Մր. Բանտօլֆ՝ զո՞ն եղած էր վեց ամիս առաջ : Յետոյ պատմեց երկու օր առաջ ձերուներին ստացած այցելութիւնը :

— Ո՛հ, ո՛հ, Մր. Նէլսըն, ըսաւ Բինքէրթըն ժպտելով երբ լսեց իր սասիին անունը : Մրցակիցներէն մէկն է, որուն փառքը կ'երգեն Մ. Նահանգաց բոլոր թերթերը : Կը ճանչնամ, կը ճանչնամ : Եւ յետոյ, ի՞նչ պատահեցաւ :

Այն ատեն Մաքէնս պատմեց թէ ի՞նչպէս Նէլսըն առջի իրիկուն մտնած էր, ստացած ըլլալով հեռապիր մը, որ զինքը Շիքակօ կը կանչէր, իր բռածին նայելով : Բացատրեց թէ գողերը ի՞նչպէս տունը մտած էին այդ մտնուովն յաջորդող գիշերը : Յետոյ, եզրկացութեան համար, աւելցուց :

— Մր. Բինքէրթըն, ի՞նչ կ'ուզեն թող ըսեն, ինծի այնպէս կու գայ թէ այդ Մր. Նէլսընը շատ գէշ վարուեցաւ մեզի հետ : Երբէք այդպէս լքանելու չէր մեզ : Շատ ազէկ գիտէր թէ ի՞նչ վտանգ կ'սպառնար մեզի, քանի որ Պոսթընի մէկ վտանգաւոր գինետան մէջ լսած էր որ առաջին անգամ մեզ կողոպտող աւագակները մտադրութիւն յայտնած էին երկրորդ այցելութիւն մը տալ մեզի : Այս պայմաններուն մէջ անհրաժեշտ իր պարտքն էր մնայ մեզի հետ և իր պաշտօնին գլուխը, ինչ որ անշուշտ պիտի ընէիք զուք :

Բինքէրթըն խիստ ծանր երեւոյթ մը առած էր :

Պահ մը լուռ կենայէ ետք հարցուց .

— Մր. Մաքէնս, ըսէք ինծի թէ այդ Բալֆ Նէլսընը ի՞նչ տպաւորութիւն գործեց ձեր և ձեր արքայ վրայ :

— Ճիշտը ըսելով, Պէտք է խոստովանիմ թէ բաւական լաւ տպաւորութիւն մը գործեց : Ազնուական երեւոյթ մը ունէր : Ատոր հետ մեկանդ լաւ խօսող մըն էր և կատարեալ աշխարհիկ մարդ մը :

— Իր վրայ չնշմարեցի՞ք բան մը որ ձեր ուշադրութիւնը գրաւէր կամ ձեզի սնտախորձ դար :

— Ո՛հ, բան մը չնշմարեցի : Սակայն անկեղծ ըլլալու համար պէտք է խոստովանիմ թէ բացարձակ վտանգութիւն մը չէր ներշնչէր ինծի :

— Ա՛հ, և ինչո՞ւ :

— Զարմանալի նայուածք մը ունէր : Դուք ալ խորաթափանց ակնարկ մը ունիք, Մր. Բինքէրթըն, բայց Նէլսընին բոլորովին տարբեր է : Սկիզբները փորձեցի ինքնիրէնս բացատրել այն անտակ մը նեղութիւնը, զոր ինծի կը պատ-

ճառէր մարդոց երեսը դիտելու իր եղանակը : Իւրովի ըսի թէ ասիկա իր սրատեսութեան և ճարտարութեան ապացոյցն է ճշդիւ : Բայց կը վախճամ որ սխալած եմ :

— Անսովոր բան մը չնշմարեցի՞ք այն գիշերը, զոր Բալֆ Նէլսըն անցուց ձեր տանը մէջ :

— Ո՛հ, այսինքն...

Մաքէնս կը վարանէր շարունակելու, բայց Բինքէրթըն պնդեց .

— Բան մը պիտի ըսէիք, բայց յետոյ կեցաք : Աւարտեցէ՛ք : Բան մը մի՛ մոռնաք : Ո՛վ գիտէ, ըստ երեւոյթին անշնչան մանրամասնութիւն մը կրնայ յանկարծ անաչի՛ն կարեւորութիւն մը առնել :

— Օ՛հ, եթէ կը վարանիմ, պատճառը այն է՝ որ սխալած ըլլալու եմ : Անշուշտ զգայախարութիւն մը, գերազրգրուած երեւակայութեանս մէկ սխալն էր :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք : Աւելի յստակ խօսեցէ՛ք :

— Ի՛ ուրեմն, անաւասիկ այն գիշերը շատ գէշ քնացայ : Պահ մը ընդոստ արթնցայ, վասնզի կը կարծէի թէ գեանայարկի բակին մէջ դողունի կերպով քալողներ կային : Կամացուկ մը բացի սենեակիս դուռը և սանդուղին վրայ գալուս պէս ուշադրութեամբ մտիկ ըրի : Բայց սխալած ըլլալու էի : Մուս մութ էր : Ինձաւ բան մը չլսեցի : Վերջապէս ապահովուեցայ ու այլ եւս համոզուելով որ պատրանքի մը խաղալիքը եղած էի, սենեակս դարձայ : Եւ արդէն ո՛չ Մր. Բանտօլֆ և ոչ գաղտնի ոստիկանը բան մը լսած չէին : Այս վերջինը բաժարձակապէս յայտարարեց որ եթէ կասկածելի ամենափոքր աղմուկ մը ըլլար, անշուշտ իր ուշադրութենէն պիտի չվրիպէր : Ասկէ դատ, ինչպէս դիտել տուաւ ինծի իրաւամբ, եթէ մէկը տունին ձօտեցած ըլլար, շուներ պիտի հաջէր :

— Ճիշդ է, ըսաւ Բինքէրթըն : Ուրեմն այդ շուներ լաւ հսկողութիւն կ'ընէր, կ'ըսէք :

— Օ՛հ, այո՛ : Եթէ մէկը փողոցէն անցած պահուն պարտեղին վանդակադրան առջեւէն քայլէր, Պէրրի իսկոյն կը մոռնէր : Ո՛ւր մնաց եթէ մէկը փորձեր այդ վանդակադուռնէն մագլցիլ : Աշխարհք իրար կ'անցնէր :

— Եւ երբ իր ճանչցած մարդիկը անցնէին, օրինակի հա-

մար դուք, կամ տունին ծանօթներն մէկը, Պէրրի կը պո-
ռաւր:

— Ո՛հ: Ձոր օրինակ, ցրուիչին կամ կաթնավաճառին
համար ձայն չէր հաներ:

— Ստուգիւ շատ տարօրինակ է որ այդ շունը թողած
ըլլայ որ այդպէս թունաւորն զինքը: Եւ որպէսզի չի պո-
ռայ, պէտք է որ կանչուած ըլլայ մէկու մը կողմէ, զոր լաւ
կը ճանչնար: Առանց կասկածի մօտեցած պիտի ըլլայ և
սքիփցից կտոր մը կուլ տուած պիտի ըլլան անոր:

Մաքէնս ապշահար դէմքով մը նայեցաւ վարպետին:
Յետոյ կուտփովը սեղանին զարնելով պոռայ:

— Խա՛հ որ, Մր. Բինքէրթըն հազար անգամ իրաւունք
ունիք: Տակաւին միտքէս անցած չէր ատիկա: Պէրրի բնաւ
ո՛ր և է բան պիտի չընդունէր օտարականէ մը: Շատ լաւ մար-
դուած էր: Շատ զարմանալի է նաև որ հաջած չէ: Հիմա
միտքս կու գայ: Մինչ ես սենեակս էի, ուսքի վրայ և
հագուած, ինչպէս արդէն ըսի, պահ մը կարծեցի թէ պար-
տէզին մէջէն լսեցի տեսակ մը խեղդուկ հոնդիւն:

— Այդպէս է, ընդմիջեց Բինքէրթըն, շունն էր որ մեռ-
նելու վրայ էր: Բացայայտ է թէ շանթանարիչ թոյն մը
կլլել տուած են անոր: Ամփոփենք: Ձեզի համար ստոյգ
է որ եթէ օտարական մը մօտենար, Պէրրի պիտի հաչէր և
ամէն պարագայի մէջ երբէք բան մը պիտի չընդունէր անոր
ձեռքէն, այնպէս չէ՞:

— Ասոր այդպէս ըլլալուն համոզուած եմ բացարձա-
կապէս, պատասխանեց Մաքէնս, առանց ամենազոյզն վա-
րանումի:

— Լաւ այդ պարագային ստիպուած ենք ընդունիլ ուրեմն
թէ շունը թունաւորուած է իրեն ծանօթ մէկու մը կողմէ:
Այդ անձը, դուրսէն զարով: Նախ պարտէզին վանդակա-
դուռին մօտեցած և կանչած է շունը, որ զինքը ճանչնալով
վազած եկած է: Յետոյ թոյնը տուած է անոր, հաւանաբար
հում միսի գնդիկի մը մէջ:

Մաքէնս ոտքի ելաւ սարսուալով:

— Բայց ո՞վ կրնայ ըլլալ ատիկա: Հարթֆօրտցի այն
սակաւաթիւ անձերը, որոնց կը յաճախէր տէրս և որոնք մեր
տունը կու գային երբեմն կատարելապէս պատուաւոր և ամէն
կասկածէ վեր մարդիկ են:

Ձեռքս կրակը կը խօթեմ և կ'երգնու՞մ թէ անոնցմէ ո՛չ
մէկը կարող է անպարկեշտ գործ մը ընել:

— Կը հաւատամ ձեր խօսքին Մր. Մաքէնս, բայց ասի-
կա արդելք մը չէ որ շունը չկրնայ թունաւորուիլ մէկու մը
կողմէ, զոր կը ճանչնար արդէն: Ասկէ զատ ուրիշ ենթադ-
րութիւն ընելը անկարելի է:

— Ծիչդ է: Պիտի տեսնէք թէ հիմա կասկածները իմ
վրաս պիտի ծանրանան: Ի հարկէ, քանի որ տիրոջս բարե-
կամները չեն կրնար խնդրոյ առարկայ ըլլալ:

— Ըսէք ինձի, Մր. Մաքէնս, թէ այդ Բալֆ Նէլսընը,
ձեր տիրոջ տան մէջ բնակած միջոցին մասնաւորապէս Պէր-
րիով զբաղեցա՞ւ:

— Իրաւ որ այո՛, զբաղեցաւ: Նոյն իսկ այնպէս կ'երե-
ներ թէ շատ կը սիրէր շուները: Իր փափաքին վրայ քանի-
ցըս Պէրրին յարկաբաժին բերուեցաւ և Մր. Նէլսըն ամէն
անգամ կը փայփայեր զայն:

— Մ'ն: Ուրիշ բան մը հարցնեմ: Հեռագրին հօտած օրը,
Նէլսըն կէս օրէ ետք դուրս ելա՞ծ էր:

— Ո՛հ, բայց առտուն քանի մը ժամ բացակայած էր:
Դարձին ըսաւ թէ պզտիկ պտոյս մը բնելու զացած էր:

— Հը՛մ, այս ամէնքը հիանալի կերպով կը պատշտծի
իրարու: Անոր այցաքարտին վրայի հասցէն կը յիշէք:

— Կատարելապէս կը յիշեմ, Շիքակօ, Պրիմ Էվըրու, 177:
Նաթ Բինքէրթըն հասցէն նօթագրեց:

— Իրաւ որ հետզհետէ փափաք կ'զգամ մրցակցիս հետ
ծանօթութիւն հաստատելու:

— Ինձի հետ Հարթֆօրտ պիտի գաք, հարցուց Մաքէնս:

— Ո՛հ: Ի՞նչէ առ այժմ պիտի չգամ: Շիքակօ պիտի
երթամ և պիտի այցելեմ պաշտօնակցիս ու մրցակցիս՝ Մր.
Բալֆ Նէլսընի:

Մաքէնս բաւական շփոթութեան մատնուեցաւ այս պա-
տասխանին վրայ: Ձէս հասկնար թէ նշանաւոր զաղանի ու-
տիկանը ինչո՛ւ կ'օւզէր նախապէս համաձայնիլ Նէլսընի հետ:
Վասնզի կը կարծէր թէ Բինքէրթընին դիտաւորութիւնը այդ
էր: Իրմէ զատ ուրիշ ամէն ոք միմիայն վարպետին իրեն
ըրած հարցումներէն պիտի հասկնար թէ անիկա ծանր կաս-
կածներ յղացած էր իր ինքնակոչ ոստիին դէմ: Բայց եթէ
բարի ծառան հաւատարմութեան և պարկեշտութեան տիպար
մըն էր, իր ուշիմութիւնով չէր փայլեր և բան մը գուշա-
կած չէր:

— Բայց եթէ չընկերանաք ինծի մինչև Հարթֆորտ, ըսաւ, ուրիմն թանկագին ժամանակ մը պիտի կորսնցնենք ու երբ դառնաք, գողերը կծիկը դրամ պիտի ըլլան:

— Ո՛չ, ո՛չ, ըսաւ գաղտնի ոստիկանը նուրբ ժպիտով մը, ընդհակառակը ես համոզուած եմ որ գողերը շուտով քանաը պիտի մտնեն:

— Կտոելի՛ չէ...: Բայց Մր. Նէյսընը Շիքակօ պիտի չգտնէք, քանի որ հեռագրով Պօսթըն կանչուած է:

— Պիտի տեսնենք: Հիմակուհիմա ամենաշքերմ փափաք ունիմ անձամբ ստուգելու և հասկնալու թէ գաղտնի ոստիկանի այդ գրասենեակը իրաւ արժանի է այն ռեկլամին ու ազմուկին, որ անոր շուրջը կ'ըլլան թերթերու մէջ: Եւ յետոյ, եթէ պէտք ըլլայ, կրնամ Շիքակօյէն Պօսթըն երթալ,

Մաքէնս տակաւին բան մը չհասկնալով, վարպետը քայլ մը մօտեցաւ անոր ու ձեռքը ուսին վրայ դրաւ:

— Ինծի նայեցէք, Մր. Մաքէնս, ըսաւ անոր ծանր ձայնով մը, մտերմական խօսք մը պիտի ընեմ ձեզի: Դուք իմաստուն կերպով շարժեցաք գալ զիս գտնելով և ձեր գործը պատմելով: Ձեր շնորհիւ հաւանական է որ քիչ օրէն վնասելու անկարող վիճակի մէջ պիտի զնեմ կարգ մը մարդիկ, որոնք առանց ասոր պիտի կրնային շատ աւելի ծանր շարիքներ գործել առաջիկային: Եւ արժանիքին մեծ մասը ձեզի պիտի պատկանի: Հիմա ազէկ մտիկ ըրէք ինծի: Անմիջապէս Հարթֆորտ պիտի երթաք, բայց ո՛չ մէկուն պիտի չըսէք թէ զիս տեսնելու եկած էք: Թող մէկը չգիտնայ թէ ես գործին տեղեակ եմ: Ազէկ հասկցա՞ք ըսածս:

— Այո՛, Մր. Բինքէրթըն, պատասխանեց Մաքէնս: Հանգիստ եղէք: Ձեր պատուէրը պիտի կատարեմ:

Ասիկա բացարձակապէս անհրաժեշտ է եթէ կ'ուզէք որ ձեր տիրոջ գողերը գտնենք: Ամենքը աս չէ: Երբ Հարթֆորտ դառնաք, ջանացէք հայթայթել ցուցակը և ճշգրիտ թիւերը այն արժեթուղթերուն, որոնք այս վերջին գողութեան պահուն յափշտակուեցան ձեր տիրոջմէն:

— Հիւանդանոց պիտի երթամ և եթէ Մր. Բանտուլֆ իր գիտակցութիւնը վերստացած է, ինծի համար դիւրին պիտի ըլլայ գոհացում տալ ձեզի, որովհետև տէրս բոլոր արժեթուղթերուն խիստ մանրամասն ցանկը ունի:

— Լա՛ւ երբ ճշգիւ գիտնաք ինչ որ գողցուած է, թիւերը հեռագրեցէք ինծի Շիքակօ: Աւելորդ է անունս զնել հեռագրին վրայ: Պարզապէս ուղղեցէք Շիքակօյի ոստիկանութեան տնօրէնին:

— Այդպէս կ'ընեմ, Մր. Բինքէրթըն:

— Եթէ դիպուածով մէկը հարցնէ ձեզի թէ ի՞նչ ընելու գացիք Նիւ Եօքք, խուսափողական պատասխան տուէք: Եւ մանաւանդ, եթէ ուզուի գիտնալ թէ որո՞ւ հեռագրած էք, չըլլայ որ բան ըսէք:

— Կրնաք բացարձակապէս հանգիստ ըլլալ, հաւատեց Մաքէնս:

— Եւ հիմա երթաք բարով: Կրնաք քանի մը ժամէն Հարթֆորտ դառնալ, այնպէս որ եթէ ձեր հեռագիրը այս իրիկուն ճամբայ հանուի, ես զայն պիտի գտնեմ Շիքակօ հասած ատենս:

Սեղծեց ձեռքը ծառային, որ խկոյն միկնեցաւ: Բարի մարդը, առանց Բինքէրթընի բոլոր պատուէրներուն նպատակը հասկնալու, որոշած էր կէտ առ կէտ գործադրել զանոնք: Վերջապէս ասիկա գաղտնի ոստիկան մըն էր և ճշմարիտ ոստիկան մը: Տակնուվրայութիւն առաջ բերող այդ Բայֆ Նէյսընին չէր նմանէր:

Մաքէնս խկոյն կայարան գնաց Հարթֆորտ դառնալու համար: Քայլով Բինքէրթընի, անիկա քանի մը վայրկեան ետք Շիքակօյի ճիւղնթաղը նստաւ և յաջորդ օրը, կէս օրէ ետք հասաւ հոն:

ՅԱՊԱՂԱՍ ՎԱՐՁՔԸ

Բինքէրթընին առաջին հոգը եզաւ ոստիկանութեան պետին թէ Հարթֆորտէն զրկուելիք հեռագիր մը պիտի ստանար անշուշտ և թէ այդ հեռագիրը իրեն՝ Բինքէրթընի յատկացեալ էր:

Հեռագիրը իսկապէս եկած էր քանի մը ժամէ ի վեր և կը պարունակէր Մր. Բանտուլֆի գողցուցած արժեթուղթերուն ճշգրիտ ցուցակը, ինչպէս նախ անոնց թիւերը:

Վարպետը երկար տարիներէ ի վեր կ'ապուած էր Շիքակօյի ոստիկանութեան պետին հետ, որուն առիթ ունեցած էր կարեւոր ծառայութիւններ մատուցանել քանի մը պարագաներու մէջ:

Ուտի պաշտօնանարը փութկոտ և սիրալիր ընդունելութիւն մը րբաւ գաղտնի ոստիկանին: Նախ հրաւիրեց զայն գաւաթ մը Պօլտոյի գինի առնել և անոր հրամցուց Հափանայի առաջին կարգի սիկառ մը: Յետոյ հարցուց թէ ի՞նչ պատճառաւ եկած էր Իլինոյզի գլխաւոր քաղաքը:

Վարպետը, փոխանակ այս հարցումին պատասխանելու, ինք ըրաւ հետեւեալ հարցումը:

— Ըսէք, սիրելի բարեկամս, թէ տեղեկութիւն ունի՞ք

Բալֆ Նէլսըն անուն մէկու մը վարած գաղանի ոստիկաններու գրասենեակէ մը, որ հաստատուած է ձեր քաղաքին մէջ, Պրիմ էվընիւ, թիւ 177:

— Իրաւ որ առիկ աւելի բան մը չեմ գիտեր: Անունով միայն կը ճանչնամ: Գիտեմ նաև թէ այդ Նէլսընը շատ ռեկլամ կրնէ Մ. Նահանգաց թերթերուն մէջ, բացի Շիքա-կոյէն, ուր համեստ լուսթիւն մը կը պահէ: Եւ յետոյ պիտի ըսեմ ձեզի թէ ես սկզբունքով բաւական սկեպտիկ եմ գաղանի ոստիկաններու այդ գրասենեակներու մասին, որոնք գրէթէ ամէն շաբթու կը հաստատուին: Անոնց վարիչներուն տասնէն ինը պարզ սկսնակներ են: որոնք երիտասարդի յաւակնութեամբ, որուն կը միանայ անփորձութիւնը, կ'երեւակային թէ մէկ հարուածով իրենց գրպանը պիտի խօթեն մեզ:

— Է՛ որքան, այդ Բալֆ Նէլսընին գրասենեակին համար է որ Շիքալիս եկած եմ:

Այն առնն Բինքէրթըն իր հիւրընկալին պատմեց Հարթֆորտի տուածը և այն այցելութիւնը զոր Մաքէնս տուած էր իրեն Նիւ Էօրքի մէջ: Ոստիկանապետը ամենարուեստ հետաքրքրութեամբ մտիկ ըրաւ այս պատմութեան և երբ վարպետը վերջացուց, ոտքի ելաւ խիստ յուզուած վիճակի մէջ:

— Ապահովապէս իրաւունք ունիք, ըսաւ: Կասկածելի բան մը կայ ատոր մէջ: Նէլսընի այդ պաշտօնատեղին աւագակներու հասարակ որջ մը կ'երեւայ ինծի:

Բինքէրթըն հաւանութեան նշան մը ըրաւ:

— Գոնէ շատ ճշմարտանման է, ըսաւ, պէտք է խոստովանիլ թէ ասիկա ամէնէն տարօրինակ գործերէն մէկն է, որոնց հանդիպած ըլլամ իմ ասպարէզիս մէջ: Ահա այդ ինքնակոչ Նէլսընը, որ առտու մը ձերունի Բանտօլֆի կը ներկայնայ իբրև գաղանի ոստիկան: Իր անունին շուրջ եղած տարապայման ռեկլամին շնորհիւ, ձերունին արդէն կը ճանչնայ զայն և հետեւաբար ամենափոքր կասկած մը չունենար: Անոր կը հաղորդէ երեւակայական պատմութիւնը գողութեան մը, զոր իրեն դէմ ծրագրած են եղեր կարգ մը ապիւրաաներ և ինք անոնց գաղանիքին տեղեկացեր է: Կ'առաջարկէ ձերունիին՝ զինքը պաշտպանել այդչափ յանդուգն եղեանափորձի մը դէմ: Իսկապէս իր միակ նպատակն է տունը մտնել, մօտէն ուսումնասիրելու համար տեղւոյն վիճակը: Միեւնոյն առիթով և փայփայանքներու շնորհիւ բարեկամ կ'ըլլայ շունին հետ, որպէս զի անկէ վախնալիք բան մը չունենայ այն օրը ուր պիտի դառնայ գիշերը կնքամոժով կ'առնէ դրոշմները փականքներուն, զորս մտադիր է բանալ յաջորպ օրը: Իր հարուածը այնպէս յղացուած և պատրաստուած ըլլալով, իրեն ուղղել կու տայ հեռագիր մը, որ Շի-

քալի կը կանչէ զինք երեւակայական պատրուակով մը: Կը մեկնի, բայց չուշանար գալու և շնորհիւ ձեռք առած նախդուշութիւններուն, կրնայ տուանց դժուարութեան ի գործ դնել ծրագրուած գողութիւնը: Գոնէ ես այսպէս կ'երեւակայեմ:

— Անշուշտ այդպէս ըլլալու է, ըսաւ ոստիկանապետը: Եկէք: Մր. Բինքէրթըն, մինչև այդ Նէլսընի գրասենեակը պիտի ընկերանամ ձեզի:

— Վայրկեան մը: Այդպէս ընելու չէ: Իրտեցէք որ տակաւին չենք գիտեր թէ Նէլսըն դարձած է իր աւարով միասին: Ուրեմն աւելի լաւ է որ դուք քանի մը ոստիկաններով կենք գրասենեակին մօտերը: Եթէ ձեզի պէտք ունենամ, կը սուլեմ և դուք կը վազէք ձեր մարդերով:

— Լա՛ւ ամէնքս ալ ձեր հրամանին տակ ենք, ըսաւ ոստիկանապետը:

Բինքէրթըն առաջունէ դնած ուրեմն: Փողոց իջաւ և ինքնաշարժ կառքով ուղղուեցաւ Պրիմ էվընիւ, թիւ 177:

177 թիւը կրող տունը ութ յարկնոց շէնք մըն էր, ուր գրասենեակներ և գործատեղիներ միայն կային: Ընդարձակ շէնքը սեփականութիւնն էր ապահովագրական ընկերութեան մը, որ զանազան յարկարանիներ վարձու կու տար վաճառակոններու գործի տէրերու կամ պանքէաներու:

Բինքէրթըն դճնապանին խցիկը մտաւ:

— Կ'աղաչեմ, Մր. Բալֆ Նէլսընի գաղանի ոստիկաններու գրասենեակը ո՛ւր է հարցուց:

— Երրորդ յարկը. ձախակողմն է:

Բայց դճնապանը այս պատասխանը տուաւ ա՛յնպիսի շեշտով մը որ տարօրինակ երեւցաւ Բինքէրթընի: Ուստի այս վերջինը պնդեց, աւելի ընդարձակ տեղեկութիւն ստանալու համար:

— Աստուած իմ ըսաւ դճնապանը, ուր գաղանի ոստիկանին իր ձեռքը սահեցուց մէկ ոսկիին շնորհիւ դիւրահաղորդ եղած էր, գիտէ՞ք, պարոն, այդ մարդիկը տակաւին իրենց սենեակին վարձքը չվճարեցին: Այսօր պայմանաժամին վերջին օրն է և եթէ այս իրիկուն չվճարեն պիտի աքսորուին: Եւ յետոյ, մարդ երբէք չի գիտեր թէ որո՞ւ դիմելու է այդ սենեակին մէջ: Պղտիկ ծառայ մը ունին հոն, տեսակ մը աշկերտ, և ամէնքը այդ է:

— Քանի՞ պաշտօնեայ կայ:

— Պաշտօնեայ: Բալֆ Նէլսընէն զատ մարդ չկայ: Սխալ ըսի, խոշոր մօրուքով և բաւական դէշ հագուած մարդ մը եւս կայ, որ յաճախ վեր կ'ելլէ: Քանի մը օր եղաւ որ չեմ տեսած ո՛չ Նէլսընը և ո՛չ ալ մըւսը: Բայց կ'երեւի թէ Մր.

Նէլսըն մեկնած ատեն ըսեր է որ խիստ շահաւոր գործ պիտի տեսնէ և վերադարձին պիտի վճարէ յայ պարձքը :

Քինքէրթըն ուրիշ զանազան հարցումներ ալ ուղղեց դռնապանին , որ կրցածին չափ պատասխանեց : Գաղտնի ոտտիկանը այս կերպով հասկցաւ թէ Նէլսընի յարկարածինը չորս սենեակներէ կը բաղկանար : Յետոյ վերելակ նստաւ և երրորդ յարկը դնաց :

Երկար ատենի պէտք չունեցաւ գտնելու համար դուռը , որուն վրայ յախճապակիէ խոշոր տախտակ մը հետեւեալ արձանագրութիւնը կը կրէր .

ԲԱԼՅ ՆԷԼՍՐՆ

Առաջնակարգ գաղտնի ոտտիկանի միջազգային գրասենեակ

Վարպետը զարկաւ դրան և առանց պատասխանի սպասելու , ներս մտաւ : Նախ ինքզինքը գտաւ սենեակի մը մէջ , ուր միմիայն կը գտնուէին գրասեղան մը , չորս աթոռներ , հին դարան մը և թուղթի կողով մը :

17—18 տարեկան տղոյն երիտասարդ մը պատուհանէն կը նայէր երբ վարպետը ներս մտաւ :

— Ներողութիւն , Մր. Նէլսընը հո՞ս է , ըսաւ :

— Կը ցաւիմ որ Մր. Նէլսընը և Մր. Չէրնըրը , երկուքն ալ ճամբորդութեան մէջ են : Ոճիրի վերաբերեալ կարեւոր գործի մը համար կանչուած են :

— Աղէ՛կ , աղէ՛կ , ըսաւ վարպետը կարուկ շեշտով մը , ձեզի սորվեցուցած դասերնին կը կրկնէք , այնպէս չէ՞ :

Երիտասարդը խիստ շփոթած երեւցաւ .

— Իրաւ որ , այո՛ , յանձնարարեցին ինձի այս պատասխանը տալ , խոստովանեցաւ : Բայց ճշմարտութիւնն ալ այս է : Մր. Նէլսըն ծանօթ գաղտնի ոտտիկան մըն է , որ դժուարին և շահագրգռական և երբեմն նոյն խոսքով մտանգաւոր գործերով կ'զբաղի :

— Այո՛ , մինչ իր ըսածին համեմատ : Եւ դուք կը հաւատար : Յայտնի է : Բնականաբար վտանգաւոր են գործերը , որոնցմով կ'զբաղի Նէլսըն : Այդ մասին ես ալ ձեզի չափ համոզուած եմ : Ընէ՛ք թէ այս պահուս այս տեղ ներկայ գտնուող միակ գաղտնի ոտտիկանն էք :

— Ես գաղտնի ոտտիկան չեմ այդ պատիւը չունիմ : Ես պարզապէս գրագիր եմ :

— Անգործ պաշտօն մը , այնպէս չէ՞ :

— Ծիչդ է որ ընելիք շատ բան մը չունիմ : Ի՞նչ ընենք , գրասենեակը տակաւին հանրածանօթ չէ : Բայց պիտի ըլլայ : Մր. Նէլսըն և Մր. Չէրնըր բարձր արժանիքի տէր մարդիկ են և անշուշտ գործեր պիտի ընեն :

— Օ՛հ , արդէն կ'ընեն : Թերեւս չէք գիտեր թէ ի՞նչ տեսակ գործեր կ'ընեն , այնպէս չէ՞ :

— Ծիչիւ չեմ գիտեր , ըսաւ երիտասարդը միամիտ դէմքով մը , բայց վերջապէս դժուար չէ գուշակել : Դուք ալ ինձի չափ գիտէք թէ գաղտնի ոտտիկանները ի՞նչ տեսակ աշխատութիւններով կ'զբաղին :

— Անշուշտ , անշուշտ : Ապացոյցը սա է որ յատկապէս եկած եմ ինձի վերաբերեալ գործ մը յանձնելու համար Մր. Նէլսընի : Ե՞րբ պիտի դառնայ :

— Կը յուսամ : Մր. Նէլսըն կամ գոնէ Մր. Չէրնըր այսօր կու գան : Ինչ պէս ըսին և պատուիրեցին որ եթէ յաճախորդներ դան խնդրոնք մը որ այս իրիկուն հրամանն :

— Ծառ աղէկ , նորէն գամ : Մեկնելէ առաջ կ'ուզէ՞ տեսնել թէ Մր. Նէլսընի վարձած միւս երեք սենեակները ի՞նչպէս կահաւորուած են :

Այս խօսքերը ըսելով , վարպետը բացաւ յարակից սենեակին վրայ նայող դուռը և ակնարկ մը ձգեց հոն : Այդ սենեակը , ինչպէս նաև միւս երկու սենեակները բոլորովին պարապ էին :

Երիտասարդը նետզնեռէ աւելի շփոթած կ'երեւէր :

— Աւելի ետքը պիտի կահաւորեն , ըսաւ , այսինքն երբ գործերը աւելի ընդարձակուին : Եւ յետոյ , սովորութիւն չէ որ յաճախորդները քննեն յարկարածինը :

Այդ պահուն դուռը յանկարծ բացուեցաւ և մօրուսաւոր մարդ մը ներս մտաւ : Սև զգեստ հագած էր , մութ գոյն վերարկուով և գլուխը դրած էր բարձր գլխարկ մը :

Բարեւեց և սեղանին վրայ դրաւ ձեռքը բռնած պայուսակը :

— Մր. Չէրնըր , ըսաւ պաշտօնեան :

Մր. Չէրնըր , Բալֆ Նէլսընի ընկերակիցը , նախ դարձաւ երիտասարդին և հարցուց :

— Մասնաւոր բան մը չկայ :

— Ո՛չ : Ընդամենը երեք պարոններ և երկու կիներ եկան : Ինչդրեցի իրենցմէ որ այս իրիկուն հանդիպին : Հիմակ ո՛ւր որ է կու գան :

— Իսկ այս պարոնը :

Քինքէրթըն յառաջացաւ համեստ երեւոյթով մը .

Անունս Օրէտ Սըմմըր է , ըսաւ : Եկած եմ ձեզի հետ խօսելու համար խիստ կարեւոր խնդրոյ մը վրայ , զոր պիտի ինչդրեմ որ հաճիք ստանձնել : Ահա թէ ի՞նչ է խնդիրը .

Վարպետը ընդմիջեց , վամնզի նոյն պահուն դրան զարնուեցաւ :

— Մտէ՛ք , պուսաց Չէրնըն :

Դուռը բացուեցաւ և սեմին վրայ երեւցան տարիքոտ

մարդ մը , որ խիստ վայելուչ կերպով հազուադէպ էր : Մը-
Հէլըրն էր , անօրէնք այն ապահովագրական ընկերութեան ,
որուն կը պատկանէր շէնքը :

— Պատիւ ունիմ որջուսելու ձեզ , Մը . Չէրնըր , ըսաւ :
Չեր անցնիլը տեսայ և օգտուեցայ ինչ որ գալու համար : Այցե-
լուծեանս պատճառը կը գուշակէք : Այսօր իսկ կ'աւարտի
պայմանագրով , զոր ձեզի շնորհած էինք ձեր պարտքը վճա-
րելու համար և խորին ցաւով պիտի ստիպուէինք . . .

Չէրնըր ձեռքովը շարժում մը ըրաւ . որպէս թէ լու-
ծեան հրախրելու համար անօրէնք :

— Մը . Հէլըրն . ըսաւ , եթէ հաճիք , հիմակ անմիջապէս
պիտի կարգադրենք այս փոքրիկ գործը : Հաճեցէք ներդա-
միս ըլլալ այս թեթև յայտարարին համար , որ բոլորովին
ակամայ էր : Միակ պատճառը եղաւ ընկերոջս և ձեր ծա-
ռային միտմամբանակ բացակայութիւնը , զոր անհրաժեշտ
ըրին բացարձակապէս ստիպողական գործեր :

Կեղքեց Մը . Սըմբրէն որ նստի և վայելեան մը սպասէ :
Յետոյ , խօսքը գարձեալ անօրէնքն ուղղելով ըսաւ .

— Կարգ մը լաւազոյն արժեթուղթեր ունիմ , զորս
յուսած թէ դժուարութիւն պիտի չյարուցանէք իբր դրամ
ընդունելու :

— Բայց անշուշտ կ'ընդունիմ , պատասխանեց անօրէնք :
Եթէ ապահով արժեթուղթեր են , ամենազոյզն դիտողութիւն
մը չեմ ընէր :

— Դուք անձամբ դատեցէք :

Հարկ չկայ ըսելու թէ Բինքէրթըն ինչ հետաքրքրութեամբ
կը հետեւէր այս խօսակցութեան : Փրօպանէն հանած էր թղթա-
պանակը , ուր կը գտնուէր Մաքէնտի կողմէ Ծիքակոյի ոստի-
կանութեան պետին ուղղուած հեռագիրը և արագօրէն աչքէ
մնացուց ցուցակը արժեթուղթերուն , որոնք հոն գրուած էին
իրենց թիւերով մէկտեղ :

Սյս միջոցին Չէրնըր կը բանար սեւ պայուսակը , զոր
սեղանին վրայ դրած էր ներս մտած ատեն : Կարգ մը թուղ-
թեր հանեց և անօրէնքն ցոյց տուաւ , ըսելով անոր .

— Կը տեսնէ՞ք , սիրելի պարոնս , եթէ տակաւին չատ-
փայլուն գործեր չէինք ըրած , պատճառը այն է որ քիչ ատե-
նէ ի վեր հաստատուած էինք : Բայց հիմա գործերը կ'սկսին
աղէկ երթալ : Յաջողութեամբ աւարտեցինք լաւագոյն գործ
մը , որ մեծ շահ մը բերաւ մեզի , առանց հաշուելու որ պի-
տի ծանօթացնէ մեզ : Համոզուած եմ թէ մինչև մէկ տարի
այնչափ առաջ պիտի տանինք գործերնիս որ այլ եւս ո՛չ թէ
չորս սենեակի , այլ ձեր տան ամբողջ մէկ յարկին պէտք
պիտի ունենաք :

— Աւելի՛ աղէկ , աւելի՛ աղէկ , պատասխանեց անօրէնք :
Մեր ուզածն ալ այդ է : Հիմակուհիմա՛ շնորհակալութիւն-
ներս ձեր նոր յաջողութեանը համար :

Յետոյ քննեց արժեթուղթերը :

— Ամէնքն ալ առջին կարգի են , ըսաւ և սիրով կ'ըն-
դունիմ գանձք իբրև վճարում : Գալով գնոյն , մննք . . .

Չկրցաւ աւելի խօսք մը ընել , վաճառի Բինքէրթըն , որ
անզգալի կերպով սեղանին մօտեցած էր , առանց միջոց տա-
լու որ անոնք զգուշանան իրմէ , և ակնարկ մը ձգած էր
Չէրնըրի տարածած թուղթերուն վրայ , ձեռքը անոնց վրայ
գնելով պոռաց :

— Կեցէ՛ք : Օրէնքի անունով կը գրաւեմ այս բոլոր
արժեթուղթերը : Անոնք առջի գիշեր գողցուեցան Հարթ-
ֆորտի մէջ , Մը . Աւելիբըմ Բանտօլֆի տունէն : Եւ այդ գո-
ղութեան երկու հեղինակներն են այս մարդն ու անոր ըն-
կերը Բալֆ Եէլըրն : Մը , Չէրնըր , կալանաւոր էք :

Եթէ շանթը ինկած ըլլար իր առջև , Չէրնըր աւելի պի-
տի չզարձուէր որչափ այս վայելեանին :

Զարմանքը , սոսկուժը կ'անդամաւորէին զինքը և քա-
րացած մնացած էր , անկարող ըլլալով միակ շարժում մը
ընել կամ միակ խօսք մը արտասանել : Փոփոխակի գաղանի
ոստիկանին և իրեն ուղղուած ատրճանակի բերնին կը նայէր
ապուշ դէմքով մը , որ կատարելապէս ծիծաղելի պիտի ըլ-
լար նուազ եղբրական պարագաներու մէջ :

Գալով անօրէնքն , ան ալ սարսափած էր : Կը հարցնէր
ինքնիրեն թէ երազի մը խաղալիքը չէր արդեօք :

Երիտասարդ պաշտօնեան իր անկիւնը կեցած էր , արժ-
գունած և բոլոր անդամներովը դորայով :

Վերջապէս Չէրնըր , ինքզինքը գտնելով , ձեռքը իսկոյն
տարաւ զգետտին ձախ զրպանը , բայց վարպետը որոտագին
ձայնով մը պոռաց .

— Ծարժում մը մի՛ ընէր , ապա թէ ոչ կրակ կ'ընեմ :
Ես Նաթ Բինքէրթընն եմ : Կարծեմ թէ կը ձանչնաք զիս :

Այս խօսքերուն վրայ Չէրնըր գերդեղին կտրեցաւ և
խուլ հեծեմանք մը արձակեց , բայց չհամարձակեցաւ դիմա-
դրութեան ամենազոյզն փորձ մը ընել : Բինքէրթընի անունը
միայն բաւական եղած էր իր բոլոր յանդգնութիւնը անհե-
տացնելու :

Փաղանի ոստիկանը պաշտօնեային դարձաւ :

— Սա պատուհաններէն մէկը բացէ՛ք , հրամայեց խիստ
չեչտով մը :

Երիտասարդը հնազանդեցաւ : Հազիւ թէ պատուհանը
բացած էր , Բինքէրթըն , առանց Չէրնըրի ուղղած իր ատը-
ձանակը վար առնելու , ձախ ձեռքովը սուրիչ մը առաւ և

իրարու վրայ քանի մը անգամ սուլեց :

Փողոցէն սուլիչի ուրիշ հարուածներ պատասխանեցին իրեն և հինգ վարկեան ետք ոստիկանութեան պետը գրասենեակէն ներս կը մտնէր , քանի մը ոստիկաններու ուղեկցութեամբ :

Չայն տեսնելով , Չէրնըր , որ անշուշտ գէմքով կը ճանչնար , բոլորովին կորսնցուց ինքզինքը : Ոստիկանները անոր օձիքը բռնեցին և գրպանին մէջ ունեցած երկու ատրճանակները տուին : Չէրնըր բնաւ չզիմազրեց .

— Կը տեսնէք , Չէրնըր , ըսաւ Բինքէրթըն , թէ այս ամբողջ խիստ կնճառոտ մեքենայութիւնը , զաղտնի ոստիկաններու այս գրասենեակը , զոր հաստատած էիք , քանի մը չձառայեցին ձեզի : Չնո մեծանուն Բայֆ Նէլսընը ի զուրթերթերու ծանուցումներուն մէջ ինքզինքը ներկայացուց իբրև տաղանդաւոր մարդ մը : Յոյց տուաւ թէ ճիշդ հակառակն էր , այսինքն ամենայնոք տխմար մը : Հարթֆօրտի այս գործին մէջ անկարելի էր աւելի ձախաւերութեամբ բռնուիլ քան ինչ որ ինք ըրած էր : Բայց ետքը պիտի զբաղինք անով : Հիմա կուհիմա դուք ձեռքս էք : Անոր հետ մեղաակից էիք և անշուշտ դուք անոր զրկեցիք հեռագիրը , զոր պատրուակ ըրաւ ծանուցանելու համար թէ յանկարծ Պոսթըն կանչուած էր : Եւ հիմա կը հաւանի՞ք ըսել մեզի թէ Բայֆ Նէլսըն ո՛ւր կը գտնուի այս պահուս :

Ինչպէս գիտին էր նախատեսել , վարպետը բնաւ պատասխան չտացաւ : Չէրնըր յամառօրէն լուռ մնաց և զաղտնի ոստիկանը ի՛նչ հարցում որ ալ ըրաւ անոր , չկրցաւ խօսեցնել զայն :

Նրիտասարդ պաշտօնեան եւս , իր յացերուն և բողոքներուն հակառակ , ձերբակալուեցաւ առժամապէս : Անիկա խիստ անկեղծօրէն յայտարարեց թէ բնաւ տեղեկութիւն չունէր Նէլսընի և Չէրնըրի ոճրագործական արարքներէն : Իրեն խոստացուած շաքաթականը հինգ տոլարէն հրապուրուելով , բնդունած էր պաշտօնեայ ըլլալ անոնց ժող , բայց աւելի բան մը չէր գիտեր :

Բինքէրթըն հաւատաց անոր թէ այս պայմաններուն մէջ իր բանտարկութիւնը կարճատև պիտի ըլլար և նոյն իսկ վճարար յանձնառու եղաւ անոր հայթայթել աւելի շահաւոր պաշտօն մը , զոր պիտի վարէր բանտէն ելլելէն վերջ և ուր ոստիկանութեան հետ ցաւալի խնդիրներ ունենալու վախէն զերծ պիտի ըլլար : Այս ժպտուն հեռանկարէն ուրախացած , երիտասարդը առանց բողոքելու թողուց որ տանին զինքը :

Բայց չէր բաւեր մեղսակիցը ձերբակալել : Հարկ էր նաև գիտնալ թէ ո՛ւր կը գտնուէր զլիաւոր յանցաւորը , այդ

Բայֆ Նէլսընը , որ անտարակոյս կազմակերպած էր այն ոճիրը , որուն զոհ եղած էր Մր . Բանտոյֆ :

Ինքէրթըն ամենախիստ հրահանգներ տուած էր որպէս զի այս գործը առժամապէս զաղտնի մնայ և օրաթերթերը չիմանան : Ամէն բան կարծել կու տար թէ Բայֆ Նէլսըն պիտի չուշանար Շիքակօ դառնալու : Պէտք էր որ առանց կասկածի դառնար իր գրասենեակը , որպէսզի կարելի ըլլար ձերբակալել զինքը :

Վարպետին խորհուրդին վրայ , ոստիկանութեան պետը երկու պահակ ձգեց գրասենեակին մէջ , որպէսզի Նէլսընը երեւցածին պէս ձերբակալեն : Մինչև այն ատեն Բինքէրթընը մտադիր էր Շիքակօյէն չմեկնիլ , նոյն իսկ եթէ հարկ ըլլար քանի մը օր մնալ :

Բայց խորին սրտնեղութեամբ տեսաւ որ թերթերը յաջորդ օր երկար յօդուածներ հրատարակեցին Բայֆ Նէլսընի վարած զաղտնի ոստիկաններու գրասենեակին փակման և Չէրնըրի ձերբակալութեան վրայ : Այդքան կարեւոր չէնքի մը մէջ կատարուած շարունակական երթեւեկներուն մէջտեղ , այդ զգայացուցող դէպքերը աննշմար մնացած չէին և մամուլը անմիջապէս ձեռք առած էր խնդիրը :

Նոյն օրուան առտուն , Նէլսընի գրասենեակը , Չէրնըրի հասցէին եկաւ Կօրնաժէն (Նիւէյմըշայր) թուագրուած հեռագիր մը , որ սա՛ր բովանդակութիւնը ունէր .

« Զմէկելու զբօսանքի համար կը մեկնիմ ձերմակ Լեոները : Քանի մը օրէն պիտի դառնամ : Նամակները զրկեցէք Չէրրի Մաունթի կայարանը , բօքս ռեսրանք :

« Այս հեռագիրը Նէլսընի գրասենեակին մէջ ընդունուեցաւ երկու պահակներուն կողմէ , որոնք զայն բօնալէ ետք , զըրկեցին զաղտնի ոստիկանին : Այս վերջինը որոշեց անմիջապէս ձածրայ ելլել դէպի Չէրրի Մաունթի , Նէլսընի փախուստի փորձը արգիլելու համար : Արդարև կրնար ըլլալ որ անիկա տեղւոյն մէկ պանդոկը մտնէր թերթեր կարդալու համար և այդ կերպով իմանար իր մեղսակցին ձերբակալուիլը : Այդ պարագային մէջ բացայայտ էր որ պիտի զգուշանար Շիքակօ դառնալէ և պիտի փութար ապահով տեղ մը ապաստանիլ :

ՅՈՒՋՈՒՄՆԱԼԻՑ ԼԵՏԱՊՆԴՈՒՍ

Ձերմակ Լեոներ կոչուած հիանալի լեռնաշղթան Չմէկութեան սիրահարներուն արքայութիւնն է ամառէ զատ բոլոր եղանակներուն մէջ : Զիւնի անհուն դաշտեր կան հոն , որոնց վայրէջքը զբօսախաղի այս տեսակին յարմարեցուած է և որոնց վրայ կարելի է սուրալ նետի մը արագութեամբ :

Չէրրի Մաունթի կայարանը , ուր կ'երթար Բինքէրթըն ,

բաւական բարձր դիրքի վրայ շինուած էր և երբ կառա-
խոււմը մինչև կորէ՛մ տարաւ զինք, վարպետը որոշեց ջմշ-
կելու յատուկ գործիքը հայթայթել, աւելի արագ հասնելու
համար իր երթալիք տեղը:

Ատենօք այս գրասխաղը եռանդով մշակած էր և քանի
մը մրցանիշեր հաստատած էր:

Շիքակոյէն գալու համար մէկուկէս օր անցուցած էր
վակոնին մէջ: Ջմշկոււմի գործիքով աւելի շուտ պիտի հասնէր
Չէրրի Մաունթ քան եթէ կատախուժմով շարունակէր իր
ճամբորդութիւնը:

Շատ հուանական չէր որ Չէրրի Մաունթի մէջ արդէն
նամակներ եկած ըլլային Նէլսոնի համար: Նոյն իսկ քնդուներ
յով որ հեռագրին պատասխանը գրած ըլլային, նամակները
չէին կրնար հոն եղած ըլլար տարուած: Բայց թերեւս կը յու-
տար հեռագիր մը ստանալ ու այդ պարագային կիօեհն պիտի
ներկայանար, գիտնալու հատար թէ բան մը եկած էր իր հա-
սցէին:

Երբ գազանի ոստիկանը ջմշկոււմի յատուկ ոտնամանները
հագած ըլլալով, սկսաւ Իրթալ դէպի կայարան, որ երկու
փարպախի չափ հեռու էր, ամենարոււն հաճոյք զգաց ձիւնին
վրայ սահելու համար:

Յաճախ առիթ չունէր նուիրուելու իր սիրական գրասա-
նքին: Տօրինքէ ի վեր այնքան դրաղուժ ունէր որ ահամայ
սօբալուած էր զանց ընել Ֆիզիքական բոլոր մարզանքները:
Սառուցապատ անհուն գաշտին վրայէն այդպէս սուրացած
պահուն, ինքնիրեն կ'ըսէր, ո՛չ առանց մելամաղձութեան թէ
աւելի հաճոյք պիտի զգար սառուցիկ հովին բուռն խածա-
տումներուն տակ վայելելով արագութեան արբշտութիւնը
քան թէ կարելի և անկարելի ծպտումներու ներքե մեծ քա-
ղաքներու մէկ կապելայէն կամ մէկ որջէն միւտը վազելով,
իյնտ յաճախ ի դերեւ ելած այն յոյսով թէ պիտի կրնար
նշանաւոր չարագործ մը ձեռք անցնել: Ծիշղը ըսելով, իր
այսօրուան արշաւանքին նպատակն ալ այդ էր, բայց պայ-
մանները բոլորովին տարբեր էին:

Վերջապէս հեռուէն նշմարեց կայարանին շէնքերը:

Այդ կայարանը մտած էր ստորտը Չէրրի Մաունթի այդ-
բարձր լեռան, ուր ամէն տարի ստուար թիւով գրասաշրջիկ-
ներ կ'երթային, անոր գագաթէն պարզուած հիանալի տեսա-
բանէն հրապուրուելով:

Հեազհեռէ կը մտենար կայարանին և կարճ հեռութիւն
մը միայն մնացած էր երբ գլուխը վերցնելով մարդ մը նշմա-
րեց: Այդ մարդը սահելու յատուկ միջոցներով կ'իջնէր ձիւնի
այն զառիթ սիւն, որուն ստորտը կը գտնուէր ինք այդ պահուն:

Վարկեան մը կեցաւ ու չկրցաւ հիանալ գրաստէրին ճամ-
բորդութեան և յանդգնութեան վրայ, յետոյ շարունակեց իր
վազքը:

Կայարանին թղթատունը կիօե մը ունէր, որ կը բացուէր
ճամբուն վրայ, այնպէս որ շէնքը մանելու պէտք չկար: Վար-
պետը կեցաւ ու զարկաւ այդ կիօե ին: Պաշտօնեան բացաւ
և Բինքէրթըն հարցուց անոր:

— Ներգութիւն, եկող և պահանջող եղած է Մր. Բա-
լֆ Նէլսըն անուն մէկու մը այս տեղ բօսք րկսքանս ուղուելիք
նամակները:

Ի՞նչ մը առաջ դադանի ոստիկանին նշմարած ջմշկողը
նետի մը պէս հասաւ և կոր գիծ մը քաշելով վայելչօրէն,
եկաւ ձիշղ Բինքէրթընին քով կեցաւ:

— Ի՞նչ կը լսեմ, պուաց դարմացած դժգոհ գէժքով մը:
Ի՞նչ իրաւունքով կը գործածէք իմ անունս: Հսեցի որ հիմակ
իմ անունս արտասահեցիք: Ի՞նչ կ'ըսէք այս պաշտօնեային:

— Այս պարոնը Մր. Բալֆ Նէլսընի համար նամակներ
կը հարցնէ, ըսաւ թղթատան պաշտօնեան, կասկածոտ ակ-
նարկ մը ձգելով Բինքէրթընի վրայ:

Վարպետը մեղմիւ ձեռքը գրպանը խօթից և առանց իր
հանդարտութենէն բան մը կորսնցնելու, հարցուց.

- Ըսել է թէ Շիքակոյի Մր. Նէլսընը դժուր էք:
- Այո՛, ես եմ, պատասխանեց մարդը չոր շէշտով մը
- Դժուր էք որ նոյն քաղաքը, Պրիճ Էվընիւի մէջ
գազանի ոստիկաններու գրասենեակի մը գլուխը կը գտնուիք:
- Այո՛: Եւ յետոյ, վերջապէս, ի՞նչ կ'ուզէք ինձմէ:

Ի՞նչ կ'ուզեմ, գիտէ՞ք, պատասխանեց Բինքէրթըն յան-
կարծ տարձանակ մը հանելով. — պարզապէս ձերտակալել ձեզ:
Իմ անունս նախ Բինքէրթըն է, Նեւ Նօրքցի: ուղղակի Շի-
քակոյէն կու գամ, ուր ձեր գրասենեակը փակեցի և ձեր մե-
ղսակից Չէրրի բանտարկեցի: Դուք Հարթ Չօրտի մէջ գոր-
ծուած գողութեան հեղինակն էք և...:

Չկրցաւ աւելի խօսք մը բսել: Նէլսըն նախնապէս ապ-
շութենէն ջլատուած էր: Յետոյ սոսկալի հայհոյութիւն մը
ըրաւ, առանց հոգ ընելու ատրճանակը, որ իր վրայ ուղղ-
ուած էր վարպետին կողմէ, յանկարծ կիսաշրջանակ մը գծեց
և ձիւնի զարիթափին վրայ խոյանալով, սկսաւ իջնել ամե-
նայն արագութեամբ:

Բինքէրթըն պիտի կրնար գնդակով մը կեցնել զայն , բայց կ'ուզէր որ անիկա ողջ ձեռք անցնէր : Իբրև ջմէկող իր ճարտարութեան վրայ վստահ ըլլալով , չվարանեցաւ Նէլսընը հետապնդելու :

Թղթատան պաշտօնեան , զարմանքէն անխօս մնաց , նայ ուածքով հետեւեցաւ անոնց : Այս դէպքերը տեղի ունեցած էին այնպիսի արագութեամբ որ տակաւին ինքզինքը դտած չէր :

Նէլսըն Բինքէրթընի ձեռքէն խուսափելու համար յուսահատական ջանքեր կ'ընէր , ամենայանդուզն կորութիւններ գծելով , արանց վարանելու նետուելով ամենացից զարիթափերու վրայ , որոնցմէ կ'անցնէր փայլակի արագութեամբ , և ցատքելով ճեղքերէ ու գահաւանդներէ , որոնք իր փախուստը պիտի կասեցնէին :

Մէկ խօսքով ամենէն դարձուրելի արգելքները չէին յաջողեր մեղմացնել անոր արշաւը : Սակայն ամեն անգամ որ ետին կը բռնար , յարածուն ստոկուժով մը կը նշմարէր թէ Բինքէրթըն գոնէ իրեն չափ դիւրաշարժ էր և կարեւորութիւն տալ չէր թուէր այն արգելքներուն , որոնց վրայ ինք՝ Նէլսըն՝ յոյս դրած էր , հարկադրելու համար զայն ընդհատել իր հետապնդումը :

Այս միջոցին դարձեալ կ'իջնէր ծուռ դառիթափէ մը , որուն մէջտեղ լայն ճեղք մը կը բացուէր : Ամէն պարագայի մէջ հարկ էր անցնիլ այդ ճեղքէն : Նէլսըն իր խոյանքը առաւ հսկայ ոտտում մը ըրաւ և ինկու միւս կողմը : Շախուստը շարունակելով հանդերձ , ետին դարձաւ ու կրցաւ հաստատել թէ զինքը Բինքէրթընէն բաժնող հեռաւորութիւնը արդէն նուազած էր զգալապէս :

Վերջի գերազոյն ճիգով մը իր բոլոր ուժերը հաւաքեց և իր վազքը աւելի արագցնել ուղեց , փորձելու համար խուսափիլ այդ յամառ և անողոք հետապնդումէն : Բայց ի գու՛ր : Նրկու մարդոց միջև գտնուած հեռաւորութիւնը հեղհեռէ աւելի կը քիչնար և Նէլսըն վերջապէս որչեց վտանգին դիմազրաւել : Ո՛չ թէ կը յուսար յաղթական ելլիլ այս պայքարէն , այլ չէր ուզեր անձնատուր ըլլալ առանց պայքարելու :

Հիմակ որ գիտէր թէ ո՛վ էր հակառակորդը , որուն առջեւէն կը փախչէր , յոյս չունէր այլ եւս : Լոկ նաթ Բինքէրթընի անունը սարսափի մատնած էր զինք , իր ոճրագործա-

կան ասպարէզին մէջ նետուելէն ի վեր մէկ բան միայն փափաքած և մաղթած էր , — երբէք գործ չունենալ Նիւ Սօքըցի երեւելի ոստիկանին հետ : Եւ քանի որ ճակատագիրը դէժ առ դէժ կը հանէր զիրենք , առ նուազն կ'ուզէր սուղ ծախել իր կեանքը :

Ճարտար և յանդուգն ընկրկուժով մը կրցաւ գրեթէ վայրկենապէս կանգ առնել , հակառակ այն արագութեան , որով տարուած էր : Ատրճանակ մը առաւ և իր հակառակորդին սպասեց , պատրաստ ըլլալով կրակելու :

Վարպետը , որ այլ եւս քիչ հեռու էր , անմիջապէս հասկցաւ Նէլսընի դիտաւորութիւնը և խիստ ճարտարօրէն կրրցաւ ձիւնի մրրիկ մը յարուցանել իր շուրջը , այնպէս որ առանց իր ընթացքը բոպէ մը մեղմացնելու , յառաջացաւ տեսակ մը ամպի մէջ , ուրկէ անկարելի էր որոշել զինքը :

Երբ Նէլսընին մօտենալու համար քանի մը քայլ միայն մնացած էր , իրարու վրայ քանի մը պայթումներ լուեցան , բայց գնդակներէն ո՛չ մէկը չհանդիպեցաւ : Փաղտնի ոստիկանը , փայլակի պէս արագ , լայն կիսաշրջանակ մը գծեց , իր հակառակորդին ձախ կողմը անցաւ , յետոյ յանկարծ աջ կողմը եկաւ նորէն , իր բոլոր ծանրութիւնովը անոր վրայ նետուեցաւ և ձիւնին մէջ տապալեց զայն ու հազուադէպ արթնամտութիւնով մը օգտուեցաւ այդ անկումէն , ատրճանակը խելու համար ձեռքէն :

Եւ արդէն Նէլսըն հազիւ պաշտպանեց ինքզինքը : Նրկու աչքերուն միջև զարնուած կռուփի ուժգին հարուած մը կիսովին թմրեցուցած էր զինքը : Երբ քանի մը վայրկեան ետք յիթափեցաւ , սահելու յատուկ մոյկերը հանուած են ոտքէն և ինք ալ ձեռնակապի զարնուած էր : Անպատմելի կատաղութեան նոգայի մը բռնուելով , դարչելի նախատինքներ ըրաւ գաղտնի ոստիկանին , որ կատարելապէս անկարելի մնաց :

Կալանաւորին ձեռքէն բռնեց ու տարաւ : Նէլսըն վերջապէս համակերպցցաւ անխուսափելիին : Այդ վայրկեանէն սկսեալ , այլ ևս բան մը չըրաւ և տխուր մտածումներու մէջ թաղուեցաւ : Փաղտնի ոստիկանը տարաւ զայն ամէնէն մօտ պահականոցը , ուրկէ փոխադրուեցաւ Հարթֆօրտ և բանտարկուեցաւ :


Նախնական քննութիւնը հաստատեց թէ ամէն բան տեղի ունեցած էր ճիշդ այնպէս , ինչպէս Բինքէրթըն գուշակած և Շիքսկոյի ոստեկանապէտին ըսած էր : Ատդարև Նէլսըն գաղտնի ոստիկանի իր դրասենեակը հիմնած էր միմիայն որ կանար : Իշխանութեան կողքին տակ , անպատիժ կերպով գործել

իր մտադրած չարիքները : Ճէյմս Չէրնըր անո՞ ընկերացած էր,
այս գեղեցիկ ծրագիրը գործադրելու համար :

Երկուքն ալ դատապարտուեցան 12 տարուան բանտար-
կուիթեան :

Գալով Ուլերիմ Բանտօլֆի, անիկա ո՛չ միայն բժշկուե-
ցաւ, այլ նաև վերստացաւ իրմէ դողցուած բոլոր գումար-
ները : Այս անգամ համոզուած ըլլալով այն փորձէն, որ քիչ
մնաց իր մահուան սլաճառ սիտի ըլլար, անիկա մեկնեցաւ
Հարիթֆօրտէն և գնաց հաստատուիլ Նիւ Եօրք, իր զաւակ-
ներուն մօտ : Հարկ չկայ թելու թէ իր հաւատարիմ ծառան
Մաքէնս իրեն հետեւեցաւ իր նոր բնակավայրին մէջ :

ՎԵՐՁ



ՀՀ Ազգային գրադարան
NL1007238 18

ՀՀ Ազգային գրադարան
NL1007237 17

ՀՀ Ազգային գրադարան
NL1007236 16

ՀՀ Ազգային գրադարան
NL1007235 15

ՀՀ Ազգային գրադարան
NL1007234 14

ՀՀ Ազգային գրադարան
NL1007233 13

ՀՀ Ազգային գրադարան
NL1007232 12

ՀՀ Ազգային գրադարան
NL1007231 11

ՀՀ Ազգային գրադարան
NL1007230 10

ՀՀ Ազգային գրադարան
NL1007229 9

ՀՀ Ազգային գրադարան
NL1007228 8

ՀՀ Ազգային գրադարան
NL1007227 7

ՀՀ Ազգային գրադարան
NL1007226 6

ՀՀ Ազգային գրադարան
NL1007225 5

ՀՀ Ազգային գրադարան
NL1007224 4

ՀՀ Ազգային գրադարան
NL1007223 3

ՀՀ Ազգային գրադարան
NL1007017 2

ՀՀ Ազգային գրադարան
NL0933053 1

ՀՀ Ազգային գրադարան
NL1007241 21

ՀՀ Ազգային գրադարան
NL1007240 20

ՀՀ Ազգային գրադարան
NL1007239 19

